
Հրաչիկ Բայրամյան, Էջեր հայ-վրացական գրական կապերի պատմությունից, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2010, 256 էջ:

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը սկիզբ է առնում անհիշելի ժամանակներից, որը, անցնելով բազում փորձությունների միջով, հասել է մինչև մեր օրերը: Հայերի ու վրացիների հոգևոր-մշակութային առնչությունների մասին ձեռագիր մատյաններում, հիշատակարաններում, արխիվային վավերագրերում, հայկական և վրացական մամուլում կան չուսումնասիրված բազում նյութեր:

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-վրացական հարաբերությունների բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Հրաչիկ Բայրամյանի հոդվածների գրախոսվող ժողովածուն մասամբ լրացնում է այդ բացը: Այն նվիրված է հայ-վրացական գրական կապերի պատմության առավել հետաքրքրական և ուշագրավ դրվագներին:

Շուրջ չորս տասնամյակ Հր. Բայրամյանը զբաղվում է հայ-վրացական գրական-մշակութային առնչությունների ուսումնասիրությամբ¹: Մեծ պատասխանատվությամբ ու ինքնքրով նա հրատարակել է վրացական դասական և ժամանակակից պոեզիայի ու արձակի երկու ստվարածավալ անթոլոգիաներ, որոնք լույս են ընծայվել «Ուսանողի գրադարան» և «Համաշխարհային գրականություն մանուկների համար» մատենաշարերով²: Մեր իրականության մեջ նա առաջինն է ստեղծել վրաց լեզվի ու վրաց գրականության դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ³, ինչպես նաև հայերեն-վրացերեն և ռուսերեն-վրացերեն բառարան-գրուցարաններ⁴:

¹ Տե՛ս Հայ գրողները վրաց գրականության մասին. Նյութերի ժողովածու, կազմեց՝ Հ. Ս. Բայրամյան, Երևան, 1986, *նույնի*՝ Ուղեցույց աստղը. Վրաց մտավորականները Հովհաննես Թումանյանի մասին. Նյութերի ժողովածու, կազմեց, վրացերենից թարգմանեց և ծանոթագրեց՝ Հ. Ս. Բայրամյան, Երևան, 1999, *նույնի*՝ Հայ-վրաց գրական-պատմամշակութային հարցերը վրաց մամուլում. Նյութերի ժողովածու, կազմեց, վրացերենից թարգմանեց և ծանոթագրեց՝ Հ. Ս. Բայրամյան, Երևան, 2001:

² Տե՛ս Վրացական պոեզիա, Երևան, 1983, Վրաց երկինք, Երևան, 1990:

³ Տե՛ս Ակնարկներ վրաց նոր գրականության պատմության (1800-1890 թթ.), ուսումնական ձեռնարկ, Երևան, 1983, *նույնի*՝ Վրաց գրականությունը V-XIX դարերում, գիրք Ա, ձեռնարկ բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար, Երևան, 2007, *նույնի*՝ Վրաց լեզու. Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, դասագիրք բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար, Երևան, 2010:

⁴ Տե՛ս Հր. Բայրամյան, Հայերեն-վրացերեն գրուցարան, Երևան, 2005, II հրատ., 2009, *նույնի*՝ Русско-грузинский разговорник, Ереван, 2005:

Գիտամանկավարժական գործունեությանը զուգընթաց՝ Հր. Բայրամյանը պարբերաբար վրացերենից հայերեն է թարգմանել նաև վրաց նշանավոր գրողների, ինչպիսիք են Լադո Մրելաշվիլին, Ռևազ Ինանիշվիլին, Նոդար Դումբաձեն (երկու հատորով), Գուրամ Փանջիկիձեն, Ռևազ Միշվելաձեն և այլք, գեղարվեստական երկերը: Նրա սցենարներով են նկարահանվել ու ցուցադրվել Իրակլի Աբաշիձեին (1984), Նոդար Դումբաձեին (1985), Սայաթ-Նովային (1987), Գալակտիոն Տաբիձեին (1987), Գաբրիել Սունդուկյանին (1988) և Շոթա Ռուսթավելուն (1990) նվիրված գիտահանրամատչելի և ուսումնական ֆիլմերը:

Հր. Բայրամյանի սույն ժողովածուն ընդգրկում է հայ-վրացական գրական-մշակութային կապերին նվիրված նրա կարևորագույն ուսումնասիրությունները: Առաջին բաժինը, որը կրում է «Հայ գրողները վրաց գրական մտքի գնահատմամբ» խորագիրը, նվիրված է Սայաթ-Նովայի և «մեծ թիֆլիսեցի» Գաբրիել Սունդուկյանի՝ վրաց գրականության հետ ունեցած առնչություններին: Նրանցից առաջինը վրաց գրական մտքի գնահատմամբ՝ «վրաց պոեզիային հաղորդել է թարմ շունչ»: Իսկ վրաց մշակույթի անվանի գործիչ Գեորգի Նատրոշվիլին այսպես է բնութագրել հայ մեծ գուսանին. «Սայաթ-Նովան Նիկո Փիրոսմանիի նման սիրում է աշխարհը, տեսնում է նրա կենդանի գույները, զգում է նրա ապշեցուցիչ բույրը: Այո՛, նա նման է Փիրոսմանիին, նման է աշխարհատեսությամբ: Նրա բանաստեղծություններում Թիֆլիսի լուսնկա գիշերվա մեղմությունն ու դալկությունն զգում ենք ճիշտ այնպես, ինչպես դա զգում ենք Փիրոսմանիի կտավներում: Նա ինքնատիպ տաղանդ է» (էջ 11-12): Հր. Բայրամյանը հավելում է, որ իսկապես անասելի հարուստ է Սայաթ-Նովայի վրացերենը. նրա խոսքը նուրբ է ու ձկուն. նա կարողացել է գտնել այն թալիսմանը, առանց որի չկա ու չի կարող լինել բարձրարվեստ պոեզիա (էջ 12):

Սայաթ-Նովայի անգուգական քնարերգության առնչությամբ հեղինակը, վկայակոչելով վրաց գրական գործիչների գնահատականները, ևս մեկ անգամ հավաստում է, որ նրանք հայ բանաստեղծին գնահատել են իբրև վրաց աշուղական երգարվեստն սկզբնավորողի ու չգերազանցված վարպետի (էջ 15):

Գ. Սունդուկյանը, ինչպես նշել է Անտոն Փուրցելաձեն, ծնվել է բազմազգ ու բազմալեզու Թիֆլիսում և ստեղծագործել է այն ժամանակ, երբ «հայերն ու վրացիները ապրում էին իբրև նույն ընտանիքի զավակներ, համակված էին նույն հետաքրքրություններով ու նույն գաղափարներով, և չէիր գատում՝ որտեղ է սկսվում հայը, որտեղ է վերջանում վրացին» (էջ 16): Ահա այսպիսի միջավայրում է գործել մեծատաղանդ դրամատուրգը, որի պիեսները բազմիցս ներկայացվել են վրացական բեմերում ու բարձր գնահատվել նշանավոր թատերագետների կողմից: Նրանցից մեկը՝ հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ Ս. Մեսխին, «Պեպոյի» վրացերեն բեմադրության 30-

ամյակի առիթով գրել է. «Սկզբից նեթ պետք է ասենք, որ այսպիսի խորամիտ, բեմի բոլոր պահանջները բավարարող և խորհել տվող պիես մեր բեմը դեռ չէր տեսել» (էջ 18): Ահա այսպես, Հր. Բայրամյանը վրաց մամուլի էջերից քաղել է Գ. Մունդուկյանին՝ Վալերիան Գունիայի, Ակակի Ծերեթելիի, Կոտե Ղիփիանիի և շատ ուրիշների տված գնահատանքի խոսքերը, որոնք ոչ միայն դրվատել են հայ դրամատուրգի արվեստն ու տաղանդը, այլև միաժամանակ անվարան նշել, որ վրաց թատերախումբն իր առաջին ներկայացումներից սկսած սնվել է Մունդուկյանի պիեսներով, փաստել, որ նրա ստեղծագործությունները նպաստել են վրաց թատրոնի վերածննդին, ուստի «Մունդուկյանը իր արժանի տեղը պետք է զբաղեցնի նաև վրաց դրամատուրգի պատմության մեջ» (էջ 19): Գ. Մունդուկյանն իր ժամանակին, ըստ վրաց հեղինակների, դրամատուրգիայում հավասարը չունեի և չի ունեցել: Այստեղ հարկ է հիշատակել Ա. Փուրցելաձեի՝ Մունդուկյանին՝ իբրև դրամատուրգի ու քաղաքացու տված գնահատականը. «Ո՞վ է Մունդուկյանը, հա՞յ է, վրացի՞, ռուս: Նա մարդ է, քաղաքացի՞ իր թուլություններով, հասարակական իր կոչումով, մարդ, որ ցանկանում է բարեփոխել կյանքը, հին, մաշված սովորությունները և սերմանել լավագույնը: Այստեղ նա և՛ հայ է, և՛ վրացի, և՛ ռուս, և՛ այլազգի» (էջ 20):

Ժամանակի հայ գրական միտքը նույնպես բարձր է գնահատել վրաց դասական գրողների ստեղծագործությունները: Ժողովածուի երկրորդ բաժինը նվիրված է այդ հարցերի քննությանը: Այստեղ ներկայացված են վրաց երեք բանաստեղծներ՝ Շոթա Ռուսթավելին, Իլիա Ճավճավաձեն և Վաժա Փշավելան: Ուսումնասիրելով հայ և վրաց մամուլի օրգանները՝ հեղինակը շրջանառության մեջ է դրել գնահատանքի բազմաթիվ խոսքեր, մասնավորապես Ռուսթավելու անգուգական «Ընձենավորը» պոեմի մասին, որը մեզ է հասել նաև շնորհիվ հայ գրիչների ու ծաղկողների: Հայերեն առաջին թարգմանությունը Ստ. Բաստամյանցը կատարել է «Ընձու մորթի հագած մարդը» խորագրով և 1860-1862 թթ. տպագրել «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրում: Հր. Բայրամյանը հետևողականորեն ներկայացրել է այդ պոեմի «կյանքը» հայ իրականության մեջ, որն ունեցել է թարգմանության մի քանի փորձեր (Վ. Տերյան, Գ. Ասատուր, Հովհ. Կարայան և ուրիշներ): Այն շատ բարձր են գնահատել հայ գրական ու մշակութային գործիչները: Ավ. Իսահակյանը մասնավորապես գրել է. «Շոթա Ռուսթավելին համաշխարհային այն եզակի հանճարներից է, որոնց մեջ ամփոփվում ու բյուրեղանում են մարդկության լավագույն իդեալները, մաքառումները, երագները, իդեալները, որոնց մեջ մարդկությունը հասնում է իր արշալույսին, կատարելությանը» (էջ 29):

Հեղինակը նույն ձևով ամփոփել է նաև Ի. Ճավճավաձեի և Վ. Փշավելայի ստեղծագործությունների շուրջ հայ մտավորականների մտքերը: Նա ի մի է բերել Տ. Փիրումյանի, Դ. Տեր-Դավթյանի, Հ. Միրիմանյանի, Ալ. Քալանթարի,

Հովհ. Թումանյանի և այլոց՝ վրաց հեղինակների ստեղծագործություններին տված գնահատականները: Նշենք, որ Հր. Բայրամյանը վերհանել է նաև վիպասաններ Ա. Ղազբեգիի, «վիրական քնարի փայլուն աղամանդներ» Ալ. Ճավճավաձեի, Գր. Օրբելիանիի, Ն. Բարաթաշվիլիի, Ռ. Էրիսթավիի, Ա. Օերեթելիի, ինչպես նաև գրական-հասարակական գործիչներ Ն. Նիկոլաձեի, Լ. Ղիփիանիի, Ի. Իոսելիանիի, Ն. Լոմոնոսիի և շատերի մասին հայ հեղինակների խոսքերը:

Ժողովածուի հաջորդ՝ «Հոգևոր միասնություն» բաժինը նվիրված է հայ և վրացի մի շարք գրողների անձնական բարեկամությանն ու մտերմությանը, որոնցից են Գ. Սունդուկյանը և Ա. Օերեթելին, Հովհ. Թումանյանը, Գր. Ռոբաքիձեն և Տ. Տաբիձեն, Ե. Չարենցը, Ն. Միծիշվիլին ու Պ. Իաշվիլին և ուրիշներ: Անցյալ դարակազմին ու դրանից հետո Թիֆլիսում հայ գրողների ու մշակութային գործիչների հետ մտերմական և ստեղծագործական սերտ կապեր են ունեցել նաև Միխեիլ Ջավախիշվիլին ու Կոստանտինե Գամսախուրդիան, Իոսեֆ Գրիշաշվիլին ու Գալակտիոն Տաբիձեն, Գեորգի Լեոնիձեն ու Միմոն Չիքովանին, Լևան Ղիփիանին ու Ալեքսանդրե Աբաշելին, Իոսեֆ Նունեշվիլին ու Ալեքսանդրե Միգուան և այլք: Հեղինակն ըստ բազմաթիվ վավերագրերի ու փաստերի տվել է նրանց անաչառ մոտեցումների գնահատականը:

Ժողովածուի «Դիմանկարային ուրվագծեր» բաժնում զետեղված են ակնարկներ՝ նվիրված Ջանսուղ Չարկվիանիի, Բենիկ Սեյրանյանի, Գուրամ Փանջիկիձեի, Նոդար Դումբաձեի, Սոս Միմավորյանի ու Գիվի Շահնազարի գրական-մշակութային գործունեությանը:

«Հողվածներ» բաժինն ընդգրկում է գիտատեսական տարաբնույթ խնդիրներին առնչվող ուսումնասիրություններ, որոնցից ուշագրավ են «Հայագիտությունը Թբիլիսիի պետական համալսարանում» և «Ակադեմիկոս Գուրգեն Մևակի վրացագիտական գործունեությունը» ծավալուն հողվածները: Այստեղ զետեղված է նաև «Լրագրական բարքերին անհարիր» վերտառությամբ հողվածը, որն ընթերցողին ծանոթացնում է մամուլում ոչ հազվադեպ հանդիպող արտառոց մի փաստի: Մեր լրագրողներից մեկը վրացի նշանավոր գրողի ու հասարակական գործչի հետ ունեցած ու հայկական թերթերում տպագրած հարցազրույցը շաբաթներ անց նույնությամբ, սակայն իբրև միևնույն անձնավորության հետ այլ առիթներով վարած հարցազրույցներ պարբերաբար տպագրել է տարբեր թերթերում ու հանդեսներում: Հեղինակն անհրաժեշտ է համարել վկայակոչել թերթերի ամսաթվերն ու համարները՝ արտահայտելով իր մտահոգությունը:

Հարուստ է նաև ժողովածուի «Գրախոսություններ» բաժինը, ուր տեղ են գտել Թբիլիսիում և Երևանում վերջին տարիներին լույս տեսած վրացերեն և հայերեն գրքերի մասին հեղինակի գրախոսականները: Անշուշտ, դրանք ևս

առնչվում են հայ-վրացական մերօրյա կապերին և գրքերի աշխարհում տեղի ունեցած ակնառու մշակութային իրադարձություններին:

Հեղինակն առանձին բաժնում ընդգրկել է նաև տարբեր ժամանակներում լրագրողների հետ հատկապես իր այն հարցազրույցները, որոնցում շոշափվում են հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության ու առնչությունների, ինչպես նաև դրանք մեր օրերում ավելի ընդլայնելու և ամրապնդելու խնդիրները: Հր. Բայրամյանն իր պատասխաններում ավստասանք է հայտնում, որ առանձին անխոհեմ գործիչների ու գրողների կողմից փորձեր են կատարվում խաթարելու դարերի ընթացքում թրծված կապերը: Գուցե և հենց այս նպատակով է նա ժողովածուն եզրափակում «Ուսանելի դասեր» վերտառությամբ «Հավելվածով», որտեղ զետեղված են տարբեր խորհրդածություններ: Դրանցում հեղինակը, վկայակոչելով հայ և վրաց ժողովուրդների բազմադարյա բարեկամության շատ անմոռաց դրվագներ, մերժում է նմանօրինակ քայլերը: Նա իր գիրքը եզրափակում է երկու ժողովուրդների մեծ բարեկամ Ն. Մառի իմաստալից խոսքերով. «Հանձինս հայերի և վրացիների, մենք տեսնում ենք հետնորդների երկու եղբայրական ազգերի, որոնք հետո բաժանվեցին այլևայլ ազգագրական, լեզվաբանական և մասամբ՝ մշակութային ու քաղաքական ներգործությունների պատճառով» (էջ 252): Մակայն հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը դարերի ընթացքում ամրապնդվել է և նորանոր ձևեր ընդունել: Այդ մասին են վկայում մեր ժողովուրդների գրույցներն ու լեզենդները, որոնցում անխաթար արտացոլված է նրանց եղբայրությունը:

Հր. Բայրամյանի ժողովածուն կազմված է գիտական պատշաճ մակարդակով ու բարեխղճությամբ և հնարավորինս զերծ է թերություններից: Այն փարատում է Խորհրդային Միության փլուզումից հետո ստեղծված թյուր կարծիքը, թե իբրև գրականությունն ու արվեստը, ժողովուրդների միջև եղած մշակութային կապերը մոռացության կմատնվեն, աստիճանաբար կկորցնեն իրենց նշանակությունը: Խնդրո առարկա գրքում ամփոփված նյութերը, սակայն, հաստատում են այն իրողությունը, որ հարևան ժողովուրդները չեն կարող ապրել առանց բարեկամական շփումների, տնտեսական, պատմական ու գրական-մշակութային առնչությունների սերտ համագործակցության: Դրա լավագույն ապացույցը հայերի և վրացիների բազմակողմանի հարաբերություններն են:

Ընթերցող հանրությանն ու հայ-վրացական գրական կապերի պատմությամբ զբաղվող մասնագետներին հասցեագրված Հր. Բայրամյանի ժողովածուն կարող է նաև ուսումնասիրական ձեռնարկի դեր կատարել բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար:

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՂԱԼՅԱՆ